ՀՀ քաղաքաշինության կոմիտեի
բնակարանային ֆոնդի կառավարման և
կոմունալ ենթակառուցվածքների վարչության
պետ Տանյա Արզումանյանին

Հաշվետվություն

Բնակարանային ֆոնդի կառավարման և կոմունալ ենթակառուցվածքների
վարչության փորձագետի կողմից կատարված աշխատանքների
ժամանակահատված 15.06.2022-31.08.2022թ.

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ Կոմիտե) գլխավոր քարտուղարի 14.06.2022թ. N25-Ա/2 հրամանով ընդունվել եմ աշխատանքի ՀՀ քաղաքաշինության կոմիտեի բնակարանային ֆոնդի կառավարման և կոմունալ ենթակառուցվածքների վարչությունում ՝ որպես փորձագետ, որի հիման վրա 2022 թվականի հունիսի 15-ին կնքվել է N06 պայմանանգիրը:

Հաշվետու ժամանակահատվածում՝ 2022 թվականի հունիսի 16-ից մինչև 2022 թվականի օգոստոսի 31-ը իմ կողմից աշխատանքներն իրականացվել են Կոմիտեի նախագահի 2022 թվականի հունիսի 4-ի N60-Ա/3 հրամանով հաստատված՝ բնակարանային ֆոնդի կառավարման և կոմունալ ենթակառուցվածքների վարչության փորձագետի կողմից իրականացվող աշխատանքների ծրագրի համաձայն:

Իրականացման ենթակա աշխատանքներն աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծմանն ուղղված պետական աջակցության ծրագրի (այսուհետ Ծրագիր) շրջանակներում հավաքագրված շուրջ 7000 ընտանիքների փաստաթղթային փաթեթների նախապատրաստում արխիվացման համար և թվայնացում (սկանավորում):

Կատարված աշխատանքները

Աշխատանքները մեկնարկել են ՀՀ Լոռու մարզի Շիրակամուտ և Սարահարթ համայնքների մասով:

Յուրաքանչյուր համայնքի համար փաթեթները դասակարգվել են ըստ հետևյալ կարգավիճակների՝

- Ծրագրի շրջանակներում ՀՀ կառավարության 2008 թվականի նոյեմբերի 13-ի N1337-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) համաձայն 2008 թվականի դեկտեմբերի 15-ի դրությամբ հաստատված ցուցակներում (այսուհետ Հերթացուցակ) հաշվառված և ծրագրի շրջանակներում շահառու ճանաչված կամ չճանաչված ընտանիքների փաթեթներ,
- Հերթացուցակում հաշվառվելու իրավունքը դատական կարգով վերականգնած ընտանիքների փաթեթներ:

Փաթեթները դասավորվել են հետևյալ տրամաբանությամբ՝ փաթեթի սկզբում տեղ են գտել Որոշման համաձայն համայնքերից ստացված փաստաթղթային փաթեթներն, այնուհետև փաթեթների համալրման նպատակով հավաքագրված լրացուցիչ (այդ թվում թարմացված) փաստաթղթերը

Խմբավորվել են Ծրագրի կազմակերպմանը և իրականացմանն առընչվող գրությունները, հարցումները, ցուցակները և այլ փաստաթղթեր:

Նշված գյուղական բնակակավայրերում բնակարանային պայմանների բարելավմանը հավակնող ընտանիքների փաստաթղթային փաթեթները և Ծրագրի իրականացմանն առընչվող այլ փաստաթղթեր նախապատրաստվել են արխիվացման համար, ստեղծվել են փաթեթներում առկա փաստաթղթերի ցանկը, յուրաքանչյուր փաթեթի համար ընձեռնելով տեղեկատու-որոնողական հնարավորություն:

Մասնավորապես նշված տրամաբանությամբ արխիվացման համար նախապատրաստվել են՝

- ՀՀ Լոռու մարզի Շիրակամուտ համայնքի ղեկավարի կողմից 2008 թվականի դեկտեմբերի 15-ի դրությամբ հաստատված հերթացուցակում հաշվառված թվով 144 ընտանիքների փաստաթղթային փաթեթները,
- ՀՀ Լոռու մարզի Սարահարթ համայնքի ղեկավարի կողմից 2008 թվականի դեկտեմբերի 15-ի դրությամբ հաստատված հերթացուցակում հաշվառված թվով 75 ընտանիքների փաստաթղթային փաթեթները:

Յուրաքանչյուր ընտանիքի փաթեթ դասավորվել, կազմվել, ցանկավորվել և կարվել է առանձին թղթապանակի/արագակարի մեջ, որի դիմերեսին լրացվել են փաթեթի վերաբերյալ հիմնական հակիրճ տեղեկությունները: Նշված փաստաթղթերը սկանավորվել են:

Արդյունքները

Հաշվետու ժամանակահատվածում արխիվացման համար նախապատրաստվել է ՀՀ Լոռու մարզի բնակավայրերի կտրվածքով թվով 219 փաստաթղթային փաթեթ:

Արխիվացման համար նախապատրաստված բոլոր 219 փաթեթները սկանավորվել և պահվում են PDF ֆորմատով էլեկտրոնային կրիչի վրա:

Բնակարանային ֆոնդի կառավարման
և կոմունալ ենթակառուցվածքների
վարչության փորձագետ՝ հաշվետու Հասմիկ Արզումանյան

Անմիջական ղեկավար Տանյա Արզումանյան

31.08.2022թ.

ՓՈՐՁԱԳԵՏԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

(հաշվետու ժամանակահատված՝ 15.06.2022-31.08.2022թ.)

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի բնակարանային ֆոնդի կառավարման և կոմունալ ենթակառուցվածքերի վարչության փորձագետ՝ Հասմիկ Արզումանյանի կողմից կատարված աշխատանքները գնահատվում են.

1.բավարար √

2.լավ

3.գերազանց

Անմիջական ղեկավար՝ Տանյա Արզումանյան

31.08.2022թ